

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Յառաջիկայ 1956ին, Հ. Բ. Ը. Միութեան յիսնամեակի տօնամբարան համար Կեդր. Վարչութեան Յանձնախումբը նախապատասխաններ կը կատարէ, որոնց մասին հանրութիւնը շահագրգռող տեղեկութիւններ տեսնին պիտի հաղորդուին մամուլով:

Այսօր կը փափաքենք յայտարարել քե, իր բարեօրական ընդարձակ ձեռնարկներուն հետ, առաւելապէս ազգային կրթութեան եւ մշակոյթի նամբով զազուրահայտեան հոգեկան ինքնութիւնն ու միութիւնը անաղաւթ ու ամուր պահելու սրբազան գործին նուիրուած այս կազմակերպութիւնը՝ վայել եւ պատշաճ կը նկատէ հայ մեծին վկայութիւնը ունենալ մեր կեանքին մէջ Հ. Բ. Ը. Միութեան սահմանուած կոչումին ու կատարած դերին մասին, անոր Յոբելեանին առիթով:

Ուստի Կեդր. Վարչութիւնը մեզում մը կը բանայ հետեւեալ նիւթերուն համար, որոնք ներշնչուած պէտք է ըլլան Հ. Բ. Ը. Միութեան յիսուն տարուան կեանքին, անոր տեսական վերելքն ու ընդհանուր իրազօրծումներէն, եւ, վաւերական տալանդի մը կնիքով, ակներեւ զեղարուեստական արժեք պէտք է ներկայացնեն.

1. — ՔԵՐԹՈՒԱՅ ՄԸ, գրող բանաստեղծին լայն տեսլիքին համապատասխան երկարութեամբ:
2. — ԹԱՏԵՐԱԽԱՂ ՄԸ, երեք տարով կամ մէկ ժամ տեւողութեամբ:
3. — ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՏՈՐ ՄԸ, որպէս ֆայլերգ կամ Մաղբերգ (Hymn), բառերով միասին:
4. — ԽՈՐՀՐԴԱՆԿԱՐ ՄԸ, յարմար ծաւալով եւ իւղանքով:

Վերելի գործերը պիտի ենթարկուին իւրաքանչիւր նիւթի յատուկ մասնագէտներէ կազմուած յանձնախումբերու լոյնութեան, եւ այդ յանձնախումբերու որոշմանց համաձայն ամէն մէկ նիւթի համար պիտի տրուին հետեւեալ մրցանակները.

Առաջին մրցանակ	500 տոլար
Երկրորդ մրցանակ	300 տոլար

Հ. Բ. Ը. Միութեան բոլոր օրհանակներու Ժողովականները եւ պատշտօնեաները չեն կրնար այս մրցումներուն մասնակցիլ:

Վերելի գործերը պէտք է Կեդր. Վարչութեան դրկուին մինչեւ 1956 Փետրուարի վերջը:

ԴԻԻԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Նիւ Եորք, 17 Օգոստոս 1955